

քի վրայ բա՛լի, բա՛լի էր ասում, ամենից առաջ սկսեց անհանգստութիւն զգաւ որովհետև դեղնատը զարթեցրել էր նրա մարմի մէջ մի քանի հիւանդութիւններ, որոնք երկար ժամանակից ի վեր կարծես թէ քնած էին մնացել Յետոյ Շահի աւագ սեկրետերը, որ մի բարձրահասակ, նիհար մարդ էր, սկսեց անհանգստանալ: Նրա դէմքը մեռելային դարձաւ, և քրտինք սկսեց հոսել նրա մարմի բոլոր ծակոտիքներից: Նրան հետևեց ներքին գործերի նախարարը, որի թշուառացած դէմքից պարզ երևում էր, որ նա ուղղում էր թոյլտութիւն խնդրել Շահից հեռանալ նրա ներկայութիւնից...

Վերջապէս միւսներն էլ համարեա նոյն վիճակին ենթարկուեցին, բացի վէզիրից, որ գաղանի կերպով ծիծաղում էր բոլորի վրայ:

Շահը տեսնելով թէ դեղնատներն ինչ ներգործութիւն ունեցան պալատականների վրայ, արձակեց նրանց, հրամայելով հաքիմ բաշում իւրաքանչիւրից տեղեկութիւն հաւաքել և մի տեղեկագիր պատրաստել ու յանձնել իրան: Խորամանկ ծեր հաքիմ բաշին լաւ առիթ ունեցաւ իր նապատակին համանելու:

Երբ Միրզա Ահմադը ժողովից վերադարձաւ, ինձ ասաց.

— Հաջի, այդ անօրէնը կարծում էր որ մենք յիմարներ ենք, բայց մենք ցոյց կը տանք նրան թէ պարսիկներս ինչեր և ովքեր ենք: Ում շունն է նա, որ համարձակուի խլել ինձանից իմ պաշտօնը և զրկել ինձ թագաւորաց թագաւորի հաքիմ՝ բաշու մեծ պատւանունից: Ո՞չ, նա միայն երազում կը տեսնէ այդպիսի բան: Մեզ Բնչ փոյթ թէ նա ինչ նոր գիւտեր է անում: Մենք կը շարունակենք անել այն, ինչ որ մեր նախնիներն անում էին: Այն գեղերը որ կարողացել են առողջացնել նրանց, կարող են առողջացնել և մեզ, և ինչ գիտութիւն որ հաքիմ լողմանը և Աբու Ավիսէննան աւանդել են մեզ, մենք էլ նոյնը կ'աւանդենք մեր սերունդներին:

Յետոյ, դարձեալ փոխադարձ խոստումներով վճռեցինք շարունակել միը դաւադրութիւններն անհաւատ ֆուանդ հաքիմին գլորելու համար, և ես հեռացայ նրա մօտից:

Գլ. իբ.

Հաջի Բաբան խնդրում է Միրզա Ահմադից ոռնիկ նշանակել իր համար:

Մինչև հիմա ես ապրել էի հաքիմ բաշու մօտ, աւելի որպէս մի բարեկամ՝ քան որպէս մի ծառայ, որովհետև նա

ինձ թոյլ էր տալիս նստել իր մօտ, ուստել իր հետ, ծխել իր ղայլանը, թէս միենոյն ժամանակ ես ուսում, խմում ու ծխում էի իր ծառաների հետ ևս: Սակայն շուտով ձանձրացայ այդպիսի կեանքից, որովհետև նրանով իմ նպատակն ու ակնկալութիւնները շատ հեռու էին մնում իրագործուելուց: Բացի մի ոսկուց ուրիշ ոչինչ չէր տուել ինձ հաքիմ բաշին, ուստի ես վճըռեցի մի որոշ հասկացողութեան գալ նրա հետ իմ գրութեան վերաբերմամբ:

Մի անգամ, երբ նա Շահի մօտից տուն դարձաւ, շատ ուրախ տրամադրութեան մէջ էր: Նա յայտնեց ինձ որ այդ օրը Շահը մեծ շնորհ էր արել իրան՝ թոյլ տալով միայն երկու ժամ նրա առջև ոտի վրայ կանգնած մնալ, և այն էլ միայն մի քանի քայլ հեռու:

— Ի՞նչ բարի մարդ է մեր Շահը, ինչքան սիրելի, ինչքան ողջամիտ: Դու չես կարող երևակայել թէ նա որքան բարի է դէպի ինձ: Գիտես ինչ եղաւ այսօր. այ, ասեմ: Շահը շատ բարկացաւ փոանգ հաքիմի վրայ, հայհոյեց նրան և իմ սիրտը շահելու համար՝ նրան ասաց, «Դու արժանի չես մինչև անգամ իմ հաքիմ բաշու կօշիկներին դիպչելու»: Յետոյ նա հրամայեց իր շաթիրներից մէկին երկու կաքաւ բերել ինձ համար իրեւ նուէր: Գիտես, այդ կաքաւները նրա բազէներն են որսացել: Բայց, ուխայ, ի՞նչ լաւ արեց շահը որ խայտառակեց հաքիմ սահիբին:

— Այո, շատ լաւ է արել, ասացի ես: Ո՞վ է կարող այսօր հաւասարուել ձեզ: Բարեբախտ և երջանիկ է շահը որ ձեզ պէս մի անգին գոհար ունի: Ո՞վքեր են փոանգները, որ համարձակուեն բժշկութեան մասին խօսել: Եթէ նրանք ուզում են գիտութիւն և հանճար ունենալ, թող գնան Միրզա Ահմազ հաքիմ բաշու մօտ:

Այս խօսքերին վրայ նա ինքնաբաւականութիւն արտայայտող մի ժպտով հրաւերեց ինձ իր դայլանը, ոլորեց բեխերը և շոյեց մօրուքը:

— Ի՞նշալլահ, ի՞նշալլահ, շարունակեցի ես, յոյս ունիմ, որ ձեր պանծալի անունը, փառքը ու պատիւը ինձ մխիթարութիւն և երջանկութիւն կը պատճառեն. ասել եմ ուզում, որ իմ գրութիւնն էլ ձեր շնորհիւ կը բարուքուի: Բայց ի՞նչ եմ ասում, ի՞նչ եմ ակնկալում, միթէ շունն ու ես մի տարբերութիւն ունենք:

— Ի՞նչպէս, հարցըեց հաքիմ բաշին. ի՞նչու ես այդպէս յուս սահատուած:

— Է, ի՞նչ ասեմ. բայց ոչ, ես մի պատմութիւն կ'անեմ և

Նրանով դուք կը հասկանանք թէ ես ինչու իմ յուսահատուած։ Փամանակով մի շուն կար որ իր արտաքինով և իր բոլոր յատ-կութիւններով այնքան նման էր գայլին, որ գայլերը նրան թոյլ էին տալիս ազատ, համարձակ ման գալ իրանց մէջ։ Նա ուտում, խմում և ոչխար էր սպանում նրանց հետ. մի խօսքով անում էր այն ամենը, ինչ որ անում է գայլը, թէև միմնոյն ժամանակ նա ապրում էր և՛ իր ընկեր շների հետ՝ որպէս շուն, և միշտ էլ մասնակից էր նրանց խնջոյքներին։ Սակայն շները կամաց-կամաց իմացան որ նա բարեկամութիւն էր անում գայլերի հետ, և սկսեցին խոյս տալ նրա ընկերակցութիւնից. Գայլերն էլ միւս կողմից իմացան որ նա շուն էր, և էլ թոյլ չտուին նրան մտնել իրանց շրջանի մէջ։ Այսպէս երկու կողմից էլ ինեղճ շունը մերժուեց, արհամարհուեց և հետեւ ապէս թշուառացաւ։ Տարաբախտ շունը տեսնելով որ իր դըրութիւնն անտանելի է գարձել, վճռեց կամ շուն դանաւալ՝ կամ գայլ։ «Հիմա, աղա հաքիմ բաշի, շարունակիցի ես, դուք թոյլ էր տալիս ինձ նստել, խմել ու ծխել ձեզ մօտ, ու իմ իշխանաւորն էք։ Դուք ինձ հետ զրոյց էք տալիս, խորհրդակցութիւններ էք անում և վերջապէս վարւում էք ինձ հետ իբրև մի բարեկամի. Միևնոյն ժամանակ, ես ձեր տան մէջ ապրում եմ և ձեր ծառաների հետ, ուտում ու խմում եմ որպէս ծառայ, մի խօսքով ապրում եմ. բայց ախր այդ տեսակ ապրուստն ի՞նչ օգուտ ունի ինձ համար, ի՞նչ աչքով էլ որ դուք նայում էք ինձ վրայ, այնուամենայնիւ ես էլի մի ծառայ եմ համարւում, այն էլ առանց ունենալու մի ծառայի յարմարութիւններ։ Ոչինչ բան իս ձեռքը չէ ընկնում. ուտուի ես աղաչում եմ որ դուք մի որոշ պաշտօն յանձնէք ինձ և մի որոշ էլ ուղիկ նշանակէք ինձ համար։

— Ռոճիկ, զարմացմամբ հարցրեց Միրզա Ահմաղը. — Իս իմ ծառաներին երբէք ոռճիկ չեմ տալիս։ Նրանք իրանց ոռճիկը հանում են իմ հիւանդների գրպաններից, դու էլ կարող ես նոյնն անել։ Նրանք ուտում են ինձ համար պատրաստուած կերակուրների մնացորդը. Տարին մէկ անդամ էլ, նոր-տարի օրը, նրանց իւրաքանչիւրին մի-մի վերարկու եմ պարզեցում. դըրանից աւելին էլ ի՞նչ են ուզում նրանք։

Այդ բոպէին ներս մտաւ շահի շաթիրներից մէկը, որ մի ժամուցանի վրայ դրուած արքայից արքայի նուիրած երկու կաթաւները ներկայացրեց հաքիմ բաշուն, որը կանգնելով՝ ստացաւ մատուցարանը և ի պատիւ նուիրողին՝ մօտեցրեց ճակատին և ասաց.

— Նորին վեհափառութեան՝ Շահնշահի շնորհը երբէք չը-

պակսի ինձանից: Ալլահը շատացնէ նրա հարստութիւնը, և ապ-  
րի նա յաւիտեանս յաւիտենից:

Շաթիրը դուրս գնաց և հաքիմ բաշխն հինգ դռան փող  
իսկոյն նրա ետեից դուրս ուղարկեց որպէս նուչը: Բայց ըն-  
ծայաբերը մեծ բարկութեամբ ետ տուեց հինգ դռանը. ըս-  
տիպուած նա տասը դռան ուղարկեց. այդ էլի մերժուեց: Ի-  
վերջոյ յիսուն դռան ուղարկեց, և նա ընդունեց:

Այս անհաճոյ հանգամանքն այնքան զայրացրեց հաքիմ  
բաշուն, որ նա թոյլ տուեց իրան այնպիսի խօսքեր ուղղել շա-  
հի հասցէին, որ եթէ վերջինիս ականջին հասնէր, վայը կը  
գար ու կը տանէր իրան:

Շահը փէշքէշ է ուղարկել ինձ համար, ասաց նա. բայց  
ես երբէք էլ չէի ուղում այդպիսի փէշքէշ: Տես, հաջի, շահի  
ծառաներն էլ այդ ձեռվ են հանում իրանց ոոճիկները: Այդ  
անամօթ ու ագահ սրիկաները ձեռք չեն բաշում մէկից, մինչեւ  
որ մի բան չպոկեն նրանից. բայց միթէ քչով գոհ են լինում  
նրանք. ոչ: Մենք միշտ 50 դռանով փող պիտի տանք նրանց:  
Այդ անիրաւները, երբ շահի համանով ոտներս Փալախիկա-  
յի մէջ են դնում—մի դէպք որ յաճախ պատահում է—նրանք  
հոգիս հանրւմ են. Դու չգիտես՝ ինչքան անխղճօրէն են հա-  
րուածում ինձ: Սապէին ասում է. «Մի թագաւորի կարելի է  
վստահել այնքան, ինչքան վստահում են մի երեխայի, որով-  
հետև ամենափոքրիկ կասկածը փոխում է առաջնի տրամադր-  
քութիւնը, և գիշերն էլ փոխում է երեխայինը»:

Ֆալախիկայի յիշողութիւնը իսկոյն վերջ տուեց նրա տըր-  
տունջին, և նա այլևս չխօսեց իր տուած 50 դռանի մասին,  
թէև խիստ տիրեց:

Ես տեսայ, որ նրա վատ տրամադրութեան ժամանակ  
չարժէր իմ մասին երկար խօսել նրա հետ. ուստի մտածեցի  
թողնել այդ ինդիրը մի ուրիշ պատեհութեան:

### Գլ. իգ.

Հաջի-Բաբան դժգոհ է իր վիճակից: — Նա ծուխնում է: — Նա սիրա-  
հարւում է:

Իմ վիճակից դժգոհ և ապագայիս մասին էլ միանդամայն  
շուարած՝ ես սկսեցի անցկացնել իմ օրերը կատարեալ ծուկու-  
թեան մէջ: Ես ամենսին տրամադրութիւն չունէի բժշկութիւն  
սովորելու, և մտածում էի թողնել հեռանալ Միրզա Ահմադի  
տնից. բայց մի հանգամանք որ յառաջացաւ իմ անգործութիւ-

նից, արգելք դարձաւ: Այդ հանգամանքը այնպիսի զգացումներ զարթեցրեց իմ սրտում, որ ես սկսեցի կարծել թէ Մաջնունն ինքն եմ: Աւելորդ է ասել, որ ես սաստիկ սիրահարութեան մէջ էի:

Դարունն անցել էր և ամառուայ տաքն սկսուել: Մարգիկ իրանց անկողինները փոխադրել էին կտուրները գիշերներն այնտեղ քնելու համար: Որովհետեւ ես չէի ցանկանում գիշերներն անցկացնել ծառաների հետ, որոնք ընդհանրապէս բոլորն էլ միասին էին քնում միմոյն սենեակում, ուստի ես էլ իմ անկողինը տարայ կտրի մի անկիմը, որտեղից կարելի էր նայել հաքիմ բաշու կանանցի մէջը: Կանանցը չորս կողմից շրջապատուած էր սենեակներով, որոնց պատուհանները նայում էին գէպի բակի կենտրոնը, որտեղ շրջանաձև բաձրանում էին յասմիկի և սօսի ծառեր: Այս ծառերի կենտրոնում շինուած էր մի բեմ, որի վրայ փռուած էին ազնիւ գորգեր և փափուկ անկողիններ, որոնց վրայ կանայքն անց էին կացնում իրանց ժամանակը տաք օրերում:

Ես շատ անգամ տեսել էի կանանցից շատերին այդ բակի այս ու այն կողմում, բայց ոչ մէկը չէր գրաւել եմ ուշադրութիւնը: Մի գիշեր, արել մտնելուց քիչ յետոյ, երբ ես պատրաստում էի անկողինս, դիպուածով նայեցի իմ անկողինում մօտ բարձրացած մի կարծ, բայց քիչ քանդուած պատի վրայով գէպի միւս կտուրը, և ի՞նչ եմ տեսնում—մի կին, որ ասածս պատի ետևում նստած՝ զրադում էր ծխախոտի տերեններ ընտրելով: Նրա կապոյտ չարսաւը անհոգ կերպով ծածկում էր նրա մազերի երկու երկար ծամերը, որ նրա կռացած ժամանակ կախուել էին նրա երեսի վրայ և ծածկում էին նրա երեսի մի մասը, այնքան հետաքրքրութիւն զարթեցրին ինձ մէջ, որ ես բուռն ցանկութիւն զգացի տեսնել նրա ամբողջ գէմքը: Նրա ձեռները փոքրիկ էին և ներկուած էին հինայով (\*): Նրա ոտներն էլ փոքրիկ էին. մի խօսքով նրա կազմուածքը, շարժումները ևայլն, քնքութիւն, շնորք և գեղեցկութիւն էին ցոյց տալիս:

Ես այնքան նայեցի նրան, մինչև որ այլևս չկարողացայ զսպել ինձ: Մի թեթև ձայն հանեցի, և նա խկոյն վեր նայեց գէպի ինձ: Մինչև նա ժամանակ զտաւ ծածկելու իր երեսը, ես արդէն կարողացայ տեսնել այնպիսի մի դիւթիչ գէմք և միւնոյն ժամանակ այնպիսի մի կախարդիչ նայուածք, որ հէնց

\*) Էինան մի տեսակ զոյն է որ գործ է ածում ամբողջ Ասիայում: Դրա դայնը նարնջի է: Պարսիկները նրանով ներկում են իրանց ձեռներն ու ոտները:

այն ըոպէին ես սիրահարուեցի: Թէև նա ծածկեց իր դէմքը՝ այսուամենային ես նկատեցի որ նա աղնալիսի խորամանկութեամբ էր ծածկել, որ կարողանար իր սև և փայլուն աչքով նայել ինձ: Ես շարունակեցի այնքան նայել նրան, մինչև որ նա ստիպուեց բարկանալ (թէև կեղծ բարկութիւն) և ասել.

— Ի՞նչո՞ւ ես նայում ինձ, չգիտե՞ս որ մեղք է:

— Ի սէր իմամ Հոսէյնի, բացագանչեցի ես, այդպէս մի խօսիր ինձ հետ: Սիրելը մեղք չէ. քո աչքերը մի ըոպէում խորովեցին սիրոս: Ի սէր քո մօրը, թոյլ տուր որ մի անգամ ևս նայեմ երեսիդ:

Մեղմ ձայնով նա պատասխանեց.

— Ի՞նչո՞ւ ես ալդ բանը խնդրում ինձանից: Դու գիտես որ մեղք է, յանցանք է որ մի կին թոյլ տայ ուրիշին տեսնել իր երեսը: Դու ոչ հայրս ես, ոչ եղբայրս և ոչ ամուսինս: Ես մինչև անգամ չեմ ճանաչում քեզ, չգիտեմ ով ես, և դու առանց ամաչելու՝ խօսում ես ինձ պէս մի աղջկայ հետ:

Այս ասելով, նա վայր ձգեց իր սաւանը (չարսաւը) իրքթէ պատահմամբ կամ անզգուշութիւնից, և ես գարձեալ ժամանակ գտայ տեսնելու նրա երեսը որ այս անգամ աւելի գեղեցիկ, աւելի դիւթիչ երեաց ինձ. սե-սև ու մեծ-մեծ աչքերը եղերուած էին սնգոյրով ներկուած երկար արտևանունքներով, որոնք նմանում էին մի դարանի, որի միջից նա արձակում էր իր նետերը: Նրա կամարաձև, գեղեցիկ յօնքերը հրաշալի կերպով հանդիպում էին միմիանց: Նրա քիթն արծուունքն էր, բերանը փոքրիկ և գեղեցկածն, և նրա կղակի մէջ տեղում կար մի փոսիկ, որ ներկուած էր մուգ-կապոյս գոյնով: Սքանչելի էին նրա սև սաթանման մազերը, որ երկար ծամերով իշխում էին նրա ուսերից ցած մինչև ոտները: Օ՛, նրա նրա գեղեցկութիւնը ինձ յիշեցրեց մեր բանաստեղծների շինարի բոյ, շաքարակեր թութակ, սիրուն մարալ խօսքերը: Ինձ թուռ էր որ ես մինչ յափտեան կարող էի անթարթ աչքով նայել նրան, առօսնց ամեններին յագնելու, թէպէտ ես բուռն ցանկութիւն էի զգում անմիջապէս ցատկելու պատի վրայից և գրկելու նրան:

Կիրքս այնպէս բոցավառուեց որ ես պատրաստուեցի ցատկել պատի վրայից և մօտենալ նրան. բայց յանկարծ մի սուր ձայն կանանցի բակից մի քանի անգամ կրկնեց՝ «Զինար, Զինար», և նա իսկոյն շտապեց դէպի վար՝ թողնելով ինձ բարացած իմ տեղում: Երկար ժամանակ ես այդպէս մնացի, յուսալով որ նա կը վերադառնար, սակայն իզնւր: Ես ուշադրութեամբ ականջ դրի ամեն-մի թեթև ձայնի: Ես լսում էի

մի սուր, բարկացկոտ ձայն, որ կամաց-կամաց այնքան սաստ-կացաւ որ կարծես թէ մէկը կատաղած՝ կուռում էր ամենքի հետ Այդ ձայնը ոչ ոքինը չէր կարող լինել, բացի հաքիմ բաշու կնոջը, որ արդէն վատահամբաւ էր իրը մի կին՝ որ իշխուում էր իր ամուսնու վրայ, և որ չափազանց կատաղի բընաւորութիւն ունէր:

Գիշերուանից բաւական ժամանակ էր անցել, և ես պատրաստում էի քնելու Յանկարծ լսեցի նոյն ձայնը որ կանչում էր. «Զինար, Զինար», որտեղ ես գնում. ինչու չես գնում քընելու։ Անորոշ կերպով լսեցի իմ սիրուհու պատասխանի բառերը, և մի բոպէից յետ ահա նա կանգնած էր կտրի վրայ։

Սիրոս սկսեց այնպէս բարախել, և կիրքս այնպէս սաստ-կացաւ, որ ես պատրաստուեցի ցատկել պատի վրայից և զըրկել նրան, բայց այդ չյաջողուեց ինձ, որովհետև նա մի-երկու բոպէում ժողովելով ծխախոտի տերմները՝ դրեց մի զամբիւլի մէջ, մի-երկու բայլ մօտեցաւ և պաղը գիշեր այստեղ եկ», ա-սելով ինձ՝ իջաւ ցած։

Այս բառերը կարծես թէ ցնցեցին ինձ ամբողջ մարմնով և այնքան քացը հնչեցին ականջներիս, որ ես սկսեցի կրկնել և մտածել նրանց վրայ այնքան, սինչև յոզնեցի, և մի տենդա-յին թուլութիւն գալով վրաս՝ պառկեցի քնելու։

### ԴԼ. իդ.

Հաջի Բարան առանձին տեսակցութիւն է ունենում զեղանի Զինարի հետ, որ պատմում է նրան թէ ինքը ինչ կեանք է վարում Միրզա Անմաղի կանանցում։

Երբ ես զարթնեցի, արեգակը փայլում էր երեսիս վրայ, «Ալժմ ես սիրահարուած եմ, ասացի ես աչքերս տրորելով և շուրջն նայելով!—Շատ լաւ տեսնենք հիմա ի՞նչ պիտի դուրս գայ սրանից, թէ նա ով է՝ այս գիշեր ես կ'իմանամենթէ նա իսկապէս հաքիմ բաշու ընտանիքից է, ես լաւ միջոց կ'ունենամ նրա տունը քանդելու և սովորեցնելու նրան թէ ինչպէս հսկողութիւն պիտի անել իր ստացուածքի վրայ։ Նրա՝ այդ սիրուն աղջկայ հետ ամուսնանալու խնդիրը պիտի միանգամայն հանեմ գլխիցս, որովհետև ով աղջկկ կը տայ ինձ, ինձ, որ մի զոյգ վարտիք գնելու փող էլ չունեմ, եւ, Ալլահը մեծ է.

Ես առայժմ կը զբաղուեմ իմ սիրաբանութեամբ, մինչև տեսնենք՝  
վերջն ինչպէս կը լինի»:

Ես բարձրացայ տեղից և սկսեցի հագնուել, բայց ան-  
շուշտ այս անգամ աւելի խնամքով, քան եղել էր իմ սովորու-  
թինը: Ես սանրեցի մազերս կրկին և կրկին անգամ, գօտիս  
աւելի կանոնաւոր կերպով կապեցի և զլխարկս սովորականից  
աւելի թեք դրի: Կտրից իջնելով և տանից դուրս գնալով  
ես գնացի բաղնիք, որտեղ այդ առաւօտը ես անցկացրի երգե-  
լով: Բաղնիքից դուրս գալով՝ ամբողջ օրը շրջեցի փողոցնե-  
րում, անհամբեր սպասելով գիշերուան այն ժամին, երբ պիտի  
տեսնէի իմ սիրած Զինարին:

Օրն անցաւ, գիշերը վրայ հասաւ, լուսինը բարձրացաւ,  
և ահա ես կտրի վրայ էի կարճ պատի մօտ կանգնած: Միր-  
տը բարախում էր, անհամբեր սպասում էի նրան, բայց նա  
չերևաց: Ես երկու անգամ հազացի, բայց ոչ մի պատասխան  
չեկաւ: Միայն մի ձայն, որ շարունակ լսում էի, հարիմ բա-  
շու կնոջ ձայնն. էր նա սաստիկ բարկացած խօսում էր մէկի  
հետ և կարծես թէ նա յարձակւում էր մէկի վրայ, ծեծում,  
ջարդում էր մէկին: Յետոյ լսեցի նրան ասելիս:

Դու ինձ հետ գործի՞ մասին ես խօսում, սատանի աղջիկ,  
ժկ հրամայեց քեզ բաղնիք գնալ, ի՞նչ գործ ունէիր գերեզմա-  
նոցում, հը՞: Դու կարծում ես թէ ես եմ քո գերուհին և դու  
իմ խանումն ես, և ին չոր ուղես ալզատ ես անելու: Ի՞նչո՞ւ գոր-  
ծը չես վերջացրել: Դու ոչ պիտի ուտես և ոչ խմես, մինչև  
գործդ վերջացնես: Դէ, կորիք, սատանի զաւակ, կորիք, գնա  
գործիդ գլուխը, և եթէ առանց գործդ վերջացնելու գաս, վալ-  
ահ, թիւլահ, այնքան կը ծեծեմ քեզ, որ բոլոր եղունգներդ  
թափուեն:

Մի-երկու բոպէ դեռ չէր անցել որ իմ չքնաղ սիրուհին  
և ընաց կտրի վրայ:

«Օ, ի՞նչ զարմանալի բան է սէրը, մտածեցի ես, ի՞նչպէս  
է նա նրացնում մարդուս միտքը»:

Նա տեսաւ ինձ, բայց ոչ մի ուշադրութիւն չդարձրեց վը-  
րաս, մինչև որ կանանցում հաքիմ բաշու կնոջ բարձրացրած  
փոթորիկը դազարեց: Եւ երբ էլ ձայն-ձուն չկար, նա մօտե-  
ցաւ ինձ և ես՝ իրեն: Ո՞վ որ գիտէ թէ ի՞նչ է սէրը, նա միայն  
կարող է երևակայել միը երկուախս դրութիւնը, որովհետեւ ես  
չեմ կարող բացատրել: Մի քանի բոպէ գրկախանուելուց յե-  
տոյ նա յայտնեց ինձ որ ի՞նքը մի քիւրդ ցեղապետի աղջիկ է  
որ մանկութեան ժամանակ իր ծնողների և նրանց հօտերի

հետ միասին գերի էր տարուել և դիպուածով ընկել Միրզա  
Ահմաղի ճանկը:

—Ա՛խ, հառաջեց նա, դու լսեցիր թէ այդ անհաւատ կի-  
նը ի՞նչ անուններ տուեց ինձ: Նա միշտ այդպէս է վարւում  
ինձ հետ: Ես նրա մօտ չնից էլ պակաս եմ համարւում: Ամեն  
մարդ ծաղրում է ինձ, ոչ ոք չէ կարեկցում ինձ, սիրտս մա-  
շուել է, թոքերս հալուել են: Ինչու սատանի զաւակ պիտի  
կոչուեմ ես, ինչու դեմի ծագ պիտի համարուեմ ես, ես՝ որ մի  
քրդուհի եմ, եղիդի եմ: Ճիշտ է, մենք վախենում ենք դեմից,  
և ով է որ չէ վախենում: բայց այդ չէ նշանակում, որ ես դեմի  
կամ սատանի ծագ եմ: Ա՛խ, ախ, եթէ նա մի անգամ ճանկո  
կ'ընկնի մեր լեռներում, ես ցոյց կը տամ նրան թէ մի քրդուհի  
ի՞նչ կարող է անել:

Ես աշխատեցի հանգատացնել նրան. խրատեցի նրան  
զսպել իր զայրոյթը և համբերութեամբ սպասել մինչև առիթ  
ներկայանար հաքիմ բաշու կնոջից վրէժ լուծելու: Նա յայտնեց  
ինձ որ Միրզա Ահմաղը ամուսնացել է մի կնոջ հետ, որ  
շատ ստոր ընտանիքից է և այնքան վատ բնաւորութիւն ունի,  
որ վերջերս նրա աչքից ընկել է: Նա յայտնեց նաև, որ հա-  
քիմ բաշին առանձին ուշադրութիւն է դարձնում իրան վրայ, և  
նրա կինը նկատելով այդ՝ նախանձում, կատաղում է, շարունակ  
տանջում է իրան:

Մինչդեռ իմ սիրուն Զինաբը խօսում էր, ես կատաղում  
էի նրա խանումի վրայ և ուզում է ցած թուչել կարից, մըտ-  
նել նրա սենեակը և տեղն ու տեղը խեղղել նրան:

—Մենք հինգ աղախիններ ենք կանանցում, ասաց Զի-  
նաբը. մէկը վրացուհի Շիրինն է, մէկը Նուր-է-Զէհանն է, մէկը  
մի եթովացուհի է, մէկը Ֆաթմէն է, և մէկն էլ պառաւ Լէյ-  
լան է: Ես խանումի նաժիշտն եմ. իմ պաշտօնն է նրա հա-  
մար զայլան պատրաստել, սուրճ բերել, կերակուր բերել, նրա  
հետ բաղնիք գնալ, նրա շորերն հանել ու հազցնել, նրա հա-  
մար ծխախոտի տերեւ չորացնել, ծեծել ու մաղել և միշտ նրա  
մօտ լինել: Վրացուհի Շիրինը սանրութարի պաշտօն ունի:  
Նա պահում է աղիս և խանումիս զգեստները: Նրա խնամքին  
է յանձնուած տան կահ-կարասիքը. նա վերահսկողութիւն պի-  
տի անի մթերանոցի վրայ, մի խօսքով տանը բոլոր բաների  
վրայ:

«Նուր-է-Զէհանը ծառայում է իբրև Փարբաշ, նա մաք-  
րում է սենեակները, փոռում է կարպեաները, օգնում է խոհա-  
բարին և պատգամներ է բերում, տանում:

«Դալով պառաւ Լէյլայլն, նա մի տեսակ վերակացուհի

Է կանանցի ջահիների վրայ: Նա պատգամներ է տանում մեր հարեմից մի ուրիշ հարեմ: Նա կատարում է նաև լրաեսի դեր հաքիմ աղայի գործերի և շարժումների վրայ:

«Այս ըռպէիս ես ու Շիրինը խիստ լարուած ենք մի-  
միանց դէմ, որովհետև մի բանի շաբաթ առաջ նա մի դէր-  
վիշից մի թալիսման առաւ խանումի համար, և խա-  
նումը մի գեղեցիկ բանկոնակ ընծայեց նրան: Ես նախանձեցի  
նրան. Ես էլ այն դէրվիշից մի թալիսման առի և հէնց այն  
օրը որ նրան կապեցի թկիցս, ես քեզ տեսայ կտրի վրայ:  
Ես ու Շիրինը շուն ու կատու ենք միմիանց հետ: Առայժմ ես  
շատ մտերիմ եմ Նուր-է-Զէհանի հետ: Երկուսս էլ միշտ  
դաւադրութիւններ ենք անում նրան տապալելու համար:

«Քանի օր առաջ շահի հարեմից մի քիչ քաղցրաւենիք  
էր ուղարկուել մեր խանումի համար: Նա մի քիչ կերաւ ու  
մնացածը պահեց: Մկները մեծ մասը կերան, բայց մեր խա-  
նումին հաւատացրինք որ Շիրինն է կերել: Խանումը բարկա-  
նալով ֆալախկայի ենթարկեց նրա ոտները: Գիտես ով ճիպու-  
ներ խիեց նրա ոտներին—Նուր-է-Զէհանը:

«Մի անգամ ես ինքս կոտրեցի խանումի շատ սիրած  
Չուր խմելու գաւաթը, բայց յանցանքը կրկին Շիրինի վրայ  
գցեցինք: Ես լաւ գիտեմ որ նա էլ ինձ դէմ է դաւադրութիւն-  
ներ անում, բայց ես շատ զգոյշ եմ: Նրա ձեռքից անցած ոչ մի  
բան չեմ ուտում, որովհետև վախենում եմ որ նա թունաւորած  
լինի: Մենք դեռ միայն մէկ անգամ ենք կոռւել միմիանց հետ:  
Նա մի անգամ սաստիկ կատաղացրեց ինձ գետնին թքելով և  
ասելով՝ «Նահիէթ բառ շէյթան» (անէծք սաստանային), որ դու  
գիտես մեծ վիրաւորանք է եղիդիներին: Ես յարձակուեցի  
նրա վրայ և դուրս տուի նրա մազերը և դեռ չպիտի բաց  
թողնէի նրան, եթէ պառաւ Լէյլան չմիջամտէր»:

Ջինարը այս և այսպիսի պատմութիւններով զրաղեցրեց  
ինձ, մինչև որ յանկարծ լսեցինք մոէզինի ձայնը, որ աղօթքի  
էր կոչում հաւատացեալներիս: Մենք ստիպուեցինք բաժանուել  
միմիանցից՝ խոստանալով յաճախ տեսնուել: Մենք պայմանա-  
ւորուեցինք որ երբ Զինարը պատեհութիւն ունենար ինձ տես-  
նելու, նա իր քօղը կը կախէր հարեմի ծառերի մէկի ճիւղի  
վրայ, և ես այդ նշանաբանը տեսնելով՝ կը սպասէի նրան  
կտրի վրայ. իսկ եթէ ցերեկն այդ նշանը չերևար ծառի վրայ,  
ես պիտի իմանայի որ այդ գիշեր հնարաւորութիւն  
չկար միմիանց տեսնելու:

ԴԼ. իե.

Հաջի Բարան եւ Զինարը կրկին տեսնում են: — Նրանք շատ երջանիկ են: — Հաջին երդում է:

Միւս երեկոն ես բարձրացայ կտուրը, յուսալով սիրու հուս քողը ծառի վրայ տեսնել, բայց իզնւր: Յուսախաբ նըստեցի ու մտածեցի իմ դրութեան վրայ որ մերթ յուսահատական էր, մերթ բաջալերիչ: Ո՞չ մի ձայն չէր լսում կանանցից: Մութն ընկաւ, և ամեն ձայն լոեց քաղաքում:

«Եյս ի՞նչպէս է որ այս երեկոյ ոչ մի ձայն չէ լսում այստեղ, մտածեցի ես: Եթէ նրանք բաղնիք են գնացել, չէին կարող մինչև հիմայ այստեղ մնալ, որովհետեւ կանանց համար բաղնիքը բաց է միայն առաւտները: Ես կարծում եմ որ նըստանցից մի բարեկամ հիւանդ է, և նրանք գնացել են այցելութեան, կամ մեռել է, գնացել են թաղելու, կամ թէ չէ հաքիմ բաշու ուսներն Փալախկային են կապել այսօր»:

Մինչդեռ այսպէս մտածում էի, յանկարծ հաքիմ բաշու տան դրան բացուելու ձայնը լսեցի, և յետոյ մի քանի կանանց ձայներ, որոնց մէջ պարզ յայտնուում էր խանումի ձայնը: Մի քանի լապտերների լուսով, որ բակի այս ու այն կողմն էին տարւում, ես տեսայ մի քանի կանայք, որոնք վերցնում էին իրանց չարսաները: Նրանց մէջ էր իմ սիրուն Զինարը:

Սիրոս սկսեց բարախել: Նա կը գայ ինձ տեսնելու, մը-տածեցի ես, և յիրաւի, կէս ժամից յետոյ, նա գողի պէս, սուսուփուս յանկարծ կանգնեց մօտս և պսաց.

— Ես եկել եմ միայն քեզ յայտնելու, որ հանգամանք-ներից ստիպուած՝ դեռ մի քանի օր չեմ կարող տեսնել քեզ: Խանումին քոյրը որ Շահի կանանցից մէկն է, երեկ յանկարծ հիւանդացաւ, և խանումին ետեկից ուղարկեցին որ գնար և ինամք տանէր նրան. բայց հիւանդը մի քանի ժամում մեռաւ: Քննութիւնից իմացուել է, որ նրա նախանձորդների մէկը թունաւորել է նրան: Խանումս մեզ բոլորին էլ տարաւ իր հետ որպէսզի մենք էլ մասնակցենք լաց ու գոռոցով, և էլ շունչ չէ մնացել մեր վրայ: Խանումս հօ իր շորերը պատառուտել է: Յուղարկաւորութիւնը վաղը կը լինի, և մենք պարտաւոր ենք առաւօտը շատ շնւտ հաւաքուել հանգուցեալի շուրջը և վերսկսել մեր սովորական լացն ու ողըը, որի համար իւրաքանչիւրիս մի սև թաշկինակ և մի քիչ էլ բաղցրաւենիք կը տրուի: Վերջապէս ես հիմայ պիտի գնամ, սակայն կը ջանամ

վաղը երեկոյեան հանդիպել քեզ. միայն դու չմոռանաս նշանաբանը:

Եւ նա անմիջապէս գնաց, թողնելով ինձ քաղցր տպաւորութեան տակ:

Միւս առաւօտը երբ աչքերս բացի և նայեցի բակի ծառին, ո՛հ, ի՞նչ ուրախութիւն, Զինարի քօղը այնտեղ էր: Բակում կանգնած էր ինքը որ ինձ տեսնելուն պէս նշան արեց ցած գնալ իր մօտ: Առանց դանդաղելու ես իջայ աստիճաններովը և մի բոպէ չանցած ես հարեմի կենտրոնումն էի:

Մի բոպէ ես սարսափեցի երբ մտածեցի որ ես մի տեղում էի, որտեղ ոչ մի տղամարդ չէր համարձակուիլ ոտք դնել. բայց Զինարի դիւթիչ ժպիտները ինձ մոռացնել տուին ամեն վախ ու մտածմունք:

— Ե՛կ, հաջի, ասաց նա, ինչո՞ւ ես վախենում, ոչ ոք չկայ այստեղ. միայն ես եմ, ես, քո Զինարը, և եթէ բախտ ունենք, այսօր երջանկութեան մէջ կը լինենք այստեղ:

— Դու ի՞նչ հրաշքով ես աջողացրել այս բանը, հարցրի ես. որտեղ է խանումը, որտեղ են միւսները, հարիմ բաշին որտեղ է, նա հօ այստեղ կը լինի, և ես ի՞նչպէս պիտի ազատուեմ նրանից:

— Մի վախենար, ասաց նա, ես պինդ փակել եմ տան դաները, և եթէ մէկը գայ, դու բաւական ժամանակ կ'ունենաս փախչելու, մինչև ես դուռը բանամ: Բայց դու բոլորովին հանգիստ եղիք, ոչինչ վախ չկայ, որովհետեւ բոլորն էլ գնացել են յուղարկաւորութեանը ներկայ լինելու: Միրզա Ահմադին էլ խանումն այսպէս հեռացրել է այստեղից, որ այսօր նա չի համարձակուիլ մօտենալ իր տանը: Իմ նախանձորդ Շիրինը խանումին հասկացրեց որ պառաւ Լէյլան շատ սքանչելի լացկանութիւն կարող է անել թաղման հանգէսներում, որովհետեւ նա մանկութիւնից սովորել է այդ արհեստը, և համողեց նրան, որ փոխանակ ինձ տանելու որ մի քրդուիի եմ և անծանօթ պարսիկների սովորութիւններին, պառաւ Լէյլային տանի: Շիրինն իհարկէ, այս հասրը գործ դրեց ինձ սև թաշկինակից և քաղցը-րաւենիքից զրկելու նպատակով: Մի ժամ առաջ, երբ բոլորն էլ գնում էին, ես ինձ շատ նեղացած ձևացրի թէ ինչո՞ւ պառաւ Լէյլան ինձանից աւելի գերադաս պիտի համարուի, և թէ ինչո՞ւ բոլորը պիտի գնան և ես տանը մենակ մնամ: Փառք Ալլահին որ մենակ մնացի: Ահաւասիկ ես ու դու այստեղ ենք, տեսնենք ինչպէս ենք անցկացնելու այսօր:

Յետոյ նա գնաց ինձ համար ճաշ պատրաստելու: Ես էլ սկսեցի մտնել հարեմի սենեակները: Ամենից առաջ ես մտայ

խանումի սենեակը որի մի պատուհանը նայում էր մի գեղեցիկ պարտիզի վրայ: Այս սենեակի մէկ անկիւնում փոռւած էր մի հաստ դորդ երկուտակ ծալուած, մի փափուկ դոշակ նրա վրայ, և մի հատ կլր բարձ որի երկու ծայրերը զարդարուած էին գեղեցիկ ծովերով, դրուած էր դոշակի վերի կողմում: Բարձի մօտ դրուած էր մի հայելի և մի արկո, որի մէջ կար սնգոյք՝ աչքերի համար, մի փոքրիկ տփով չինական կարմիր ներկ, մի զոյգ բազպաններ որոնց հետ կապուած էին մի քանի թալիսմաններ, մի թուղովիլի (ճակատի զարդ), մի գրչահատ, մի մկրատ և մի քանի ուրիշ մանր-մունք բաներ: Սրանց մօտ դրուած էր մի թառ և մի թմբուկ: Նրա անկողինը մի կապագոյն սաւանի մէջ փաթաթուած՝ դրուած էր մի ուրիշ անկիւնում:

Մի քանի առանց շրջանակի պատկերներ կախուած էին պատերից և պատերի մէջ փորուած դուսակների մէջ շարուած էին զանազան բիւրեղեայ անօթներ և այլն: Մի ուրիշ անկիւնում էլ մի քանի շիշ լաւ Շիրազի գինի կար: Շշերի մէկը կիսատ էր. կարծես թէ մէկը հէնց մի-երկու ժամ առաջ խմել էր կէսը: Երկի խանումը խմել էր մի քանի բաժակ, որպէսզի լաւ ոգերորէր և կարողանար լաւ լացկանութիւն անել իր քրոջ թաղման հանդիսում:

«Ի՞նչպէս երևում է, մտածեցի ես, Հազրէթէ Մոհամէդը այս տան մէջ շատ չէ յարգուամ: Այսպէս է, մարդկանց արտաքինը շատ անգամ սուրբ տպաւորութիւն է թողնում, բայց ներքինը՝ Ալլահն լաւ գիտէ թէ ինչ է: Մեր հաքիմ բաշին որ ինքն իրան մի բարեպաշտ մուսուլման է ցոյց տալիս, ծածուկ այնքան գինի է խմում որքան շարբաթ և պաղ ջուր»:

Վերջապէս, մինչև միւս սենեակներն էլ տեսայ, Զինաբը արդէն պատրաստել էր ճաշը: Ճաշելու համար մենք մտանք խանումի սենեակը և կողառկող նստեցինք փափուկ դոշակի վը-րայ: Մեր ճաշը բաղկացած էր մի մեծ պնակ ձեան պէս սպիտակ փլաւից, խորովածից, մի հատ Սպահանի սեխից, տանձից, դեղձից, ձուածելից, պանրից, սոխից, մածունից, երկու տեսակ շարբաթից, քաղցրաւենիքից և մեղրից:

— Միրես մօրդ արել, Զինաբ, ասա տեսնեմ որտեղից այսպէս շուր բերիր ու պատրաստեցիր այս ամենը, հարցըի ես: Այս մի ճաշ է, որ միայն Շահն է կարող ուտել:

— Այդ մասին գլուխի մի ցաւացնիլ, պատասխանեց նա, դու սկսիր ուտել, Խանումս անցեալ գիշեր հրամայեց պատրաստել այս բոլորը այս առաւօտեան համար, սակայն երկու բորդ մտածողութեամբ՝ աւելի յարմար տեսաւ իր հանգուցեալ

քրոջ անում կերակրուել։ Ուրեմն ամեն բան արդէն պատրաստ էր, և շատ բան չեմ արել։ Դէ, սկսենք անուշ անել ու քէֆ անել։

Մենք կերանք որքան կարողացանք և շատ քիչ բան թողեցինք մեզանից յետոյ ուտողների համար։ Լուանալով մեր ձեռքերը, գինին առաջ քաղցինք և անարգելով Մոհամէդի պատուիրանը, մի-մի բաժակ խմեցինք՝ շնորհաւորելով միմիանց աշխարհիս մէջ ամենաերջանիկ արարածները լինենուս առթիւ։

Դինին այնքան ոգմորեց ինձ, որ վերցնելով մօսս դըրուած թառը, անհոգութեամբ սկսեցի զարկել թելերին երգելով նրա հետ Հափէզից մի կտոր, որ ես սովորել էի իմ մանկութիւնից։

Զինաբը յափշտակուեց։ Նա երգիս մէջ բովանդակուած խօսքերից աւելի լաւը դեռ չէր լսել իր կեանքում։ Մենք մոռացել էինք որ երկուսս էլ դժբախտ արարածներ էինք—նա մի գերուհի, իսկ ես ամեն բանից զրկուած մի մարդ։ Մենք մի բովէ թոյլ տուինք մեզ կարծելու որ մեզ շրջապատող բոլոր բաները մեր սեպհականութիւնն են և թէ գինին ու սէրը յաւիտենական են։

Ես երգեցի մի քանի ուրիշ երգեր և խմեցինք դարձեալ մի քանի բաժակներ։ Վերջացաւ մի շիշ գինին, վերջացան իմ երգերը։ Բայց դեռ ժամանակ շատ կար և մենք սիրու չէինք կտրում բաժանուել միմիանցից։

—Զինաբ, ասացի ես, ոու ինձ խոստացել ես բո կեանքի պատմութիւնն անել։ Այժմ խնդրում եմ որ խոստումդ կատարես, որովհետև սրանից աւելի մի յարմար ժամանակ էլ երբ կը լինի։

Նա ընդունեց կատարել իր խոստումը և սկսեց իր պատմութիւնը այսպէս։

Գ.Լ. իզ.

Զինաբի պատմութիւնը։

«Ես մի քիւրդ ցեղապետի աղջիկ եմ։ Հայրս ամրող Քիւրդիստանում յայտնի է Օղուս Աղա անունով, բայց թէ մայրս ով էր, այդ ես չգիտեմ։ Գիտեմ որ մի կերպով ես ապրել ու մեծացել եմ։ Մանկութեանս օրերում միակ բարեկամն որ ես ունէի, մի ձիու քուսակ էր, որին հայրս սիրում ու խընամք էր տանում որպէս իր ընտանիքի մի անդամի։ Նա ծը-

Նուել էր հինգ նոյն վրանի մէջ, որտեղ ապրում էին հօրս կի-  
ները Նրա մայրը որ զուտ արաբական արիւնից էր, ապրում  
էր մեր մէջ ճիշդ որպէս մեր գերդաստանի անդամ: Ճիշտն ա-  
սած, նա աւելի էր ինամատարւում քան հօրս կիները: Վրան-  
ների մէջ ամենատաք տեղը նրան էր տրւում: Փափուկ թաղիք-  
ներով միշտ ծածկում էին նրան: Մեր ճանապարհորդութիւն-  
ների ժամանակ մենք ամենից շատ նրան էինք հոգ տանում երբ  
որ նա՝ մայրը մեռաւ, մեր ամբողջ բանակը սգի մէջ ընկաւ:

«Թուռակը մեծացաւ և այսօր ամբողջ Քիւրդիստանի  
փառքն ու պարծանքն է, բայց երանի թէ հայրս այդքան չը-  
սիրէր այդ կենդանուն: Գոնէ ես այժմ մի ազատ կին կը լի-  
նէի ինձ համար... Ա՛խ, մեր ընտանեկան կեանքի ըոլոր ձա-  
խորդութիւնների պատճառը այդ քուռակի մայրն էր, ինչպէս  
յետոյ կը պատմեմ քեզ: Դու նախ պիտի իմանաս, որ քիւրդերը  
թէպէտ իրանց ոչ մի իշխանութեան հպատակ չեն համարում,  
այնուամենայնիւ մեր նախահայրերը՝ ինչպէս և իմ հայրը, ա-  
ռածացնում էին իրանց հօտերը և կանգնեցնում էին իրանց  
վրանները Քիւրդիստանի լեռների այն մասներում, որ պատ-  
կանում են տաճիկներին, և որ գտնում են Բաղդատի փաշա-  
յի իշխանութեան ներքոյ: Երբ որ այդ փաշան առիթ էր ու-  
նենում կոտելու ապստամբների կամ թշնամիների դէմ, նա  
միշտ գիմում էր մեզ, ինդրելով մեզանից՝ ծիեր տալ իրանց  
և օգնել նրան մեր մարդիկներով: Հայրս իր քաջութեամբ, ու-  
ժով և ձիավարժութեամբ շատ սիրելի էր փաշային և այդպի-  
սի դէպեհում նա ամենից առաջ հօրս օգնութեանն էր դի-  
մում:

«Կահարիները մի անգամ անցան Բաղդատի սահմանագը-  
լուկը, և սպառնում էին տիրել այդ քաղաքը: Փաշան ստի-  
պուեց քիւրդերի օգնութեանը դիմել: Քիւրդերն օգնեցին նրան,  
և նա բազմաթիւ զօրքով թշնամու առաջ գնաց: Գիշերային  
յարձակման ժամանակ, հայրս սպանեց վահարիների հրամանա-  
տար արար Շէյխի որդուն և վերցնելով նրա զէնքերն ու մա-  
տակ ձին՝ վերաբարձաւ իր բանակը: Հայրս տեսնելով, թէ այդ  
մատակը ինչ մեծ գանձ էր իրան համար, և մտածելով նրան միշտ  
հեռու պահել տաճիկ փաշայի աչքից, պատուիրեց իր մարդկանց  
որ նրան թափնուած պահեն և ինսամք տանեն հինգ իր կանանց  
վրանում: Սակայն շուտով յայտնուեց որ հայրս սպանել էր  
Շէյխի որդուն և սեփականացրել նրա ձին: Պատերազմը դա-  
պարելուց քիչ յետոյ, երբ վահարիները վերադարձել էին ի-  
րանց անսապատը և քիւրդերն էլ իրանց լեռները, մի առաւօտ  
փաշայի պաշտօնեաների մէկը, որ կոչւում էր միջախոռ (ա-

խոռապետ), այցելեց մեզ: Նրա հետ կային տասը լաւ զինուած ձիաւորներ: Դեռ այս մարդիկն մեր բանակը չհասած՝ հայրս իւմացաւ թէ նրանք ովքեր էին, իսկոյն հրամայեց իր մեծ որդուն հեծնել մատակը և գնալ, պահուել մի ձորի մէջ: Մեր բանակում իսկոյն պատրաստութիւններ տեսնուեցին նրանց հիւրասիրելու: Նրանց ձիերը տարուեցին արօտներն արածացը նելու, նրանք հրաւիրուեցին տղամարդկանց վրանը, որտեղ հիւրասիրուեցին սուրճով, չիբուխով, վլաւով և գառան խորովածով: Մենք կանայքս զաղտագողի նայում էինք նրանց վրանի մէջ և հետաքրքրուում էինք լսելու թէ նրանք ինչ են խօսում:

— Բարով էք եկել, և ձեզ հետ երջանկութիւն էք բերել, ասաց հայրս միրախոռին:

— Դժբախտաբար ոչ, պատասխանեց միրախոռը: Մեր տէրը, փաշան ողջունում է ձեզ. նա սիրում է ձեզ, և ասում է որ դուք իր ամենալաւ բարեկամներից մէկն էք: Դուք բարի մարդ էք. բոլոր քիւրդերն էլ լաւ են. ձեր բարեկամները մեր բարեկամներն են, և ձեր թշնամինները՝ մեր թշնամինները:

— Ես փաշայի ստրուկն եմ, պատասխանեց հայրս: Փառք Ալլահին, մենք խաղաղութեամբ ապրում ենք փաշայի հովանաւորութեան ներքոյ, և մեր գլխարկները թեք ենք դնում առանց վախենալու որևէ մէկից. Ալլահն առատութիւն պարզէ նրան:

— Օդուս աղա, ասաց միրախոռը. Ես հիմայ պիտի յայտնեմ ձեզ թէ մենք ինչ նպատակով ենք եկել այսաեղ: Վահաբիները—անէծք նրանց մօրուքներին—մի պատղամաւորութիւն են ուղարկել մեր պետին, պահանջելու նրանից այն մատակը՝ որ իրանց Շէյխի որդին հեծել էր կոռուի ժամանակ: Նրանք ասում են, որ այդ մատակը զուտ արարական ծագում ունի և թէ նա այն մատակի սերունդից է, որ հազրէթէ Մոհամէդը հեծել էր Մէդինայից փախչելու ժամանակ: Արդ, բոլոր աշխարհը գիտէ, որ դուք էք այն տղամարդը, որ ըսպանել է Շէյխի որդուն և տարել նրա ձին: Վահաբիներն առաջարկել են մեր փաշային այդ մատակը ետ ստանալու համար այնքան ոսկի տալ նրան, մինչև նա ասի «Էլ բաւական է»: Եւ որովհետև այդ խնդիրը կապ ունի կառավարական գործերի հետ, ուստի նաև փաշան մեզ ուղարկել է այստեղ խնդրելու ձեզանից որ մատակը յանձնէք մեզ: Ահա այս է իմ բերած պատղամը:

— Վալլահ, բէլլահ, երդւում եմ այն, աղով որ ես ուստում եմ, ասաց հայրս, երդւում եմ ձեր հոգով և երկնքի աստը-